

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զարկային և մաքսային օրենսդրության նորություններ	2
1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	2
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ -----	3
2. Զարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ	4
3. Զարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ	5
3.1 Ծրագրեր և կատարողական -----	5
3.2 Գանգատարկումների և ծառայողական քննությունների ակնարկ -----	7
3.3 Միջազգային համագործակցություն -----	7
3.4 Զարկային և մաքսային թվերի համառոտագիր -----	8

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 | Օրենքներ

Փաստաթուղթ	«Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	10 հունիսի, 2010թ., ՀՕ-105-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 32(766), 14.07.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ **մինչև 2011 թվականի հուլիսի 1-ը (նախկինում՝ մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը)** համայնքների վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների համար հաշվարկված հողի հարկի գումարները (մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) առանց հաշվարկված տույժերի ու տուգանքների վճարած ֆիզիկական անձինք ազատվում են գյուղատնտեսական նշանակության հողատարածքների համար հողի հարկը սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված և չվճարված տույժերի և տուգանքների վճարումից:



1.2 | ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հարկային մարմնի ներկայացուցիչ նշանակելու ենթակա հարկ վճարողների 2010 թվականի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	24 հունիսի 2010թ., N 785-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 31 (765), 07.07.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է հարկային մարմնի ներկայացուցիչ նշանակելու ենթակա հարկ վճարողների 2010 թվականի ցանկը:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով ներկայացվող պահանջներին համապատասխանող հարկային հաշիվների դուրսգրումն ապահովելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 13-ի N 552-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	24 հունիսի 2010թ, N 799-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 31(765), 07.07.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի կիրառման իմաստով մինչև 2010 թվականի հուլիսի 1-ը օրենքով սահմանված վավերապայմաններով դուրս գրված հարկային հաշիվների ձևերը 2010 թվականի հուլիսի 1-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար համարվում են օրենքի 20-րդ հոդվածով ձեռքբերված հարկային հաշիվների ձևեր: Նշված որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 13-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը կիրառելու մասին N 552-Ն որոշումը, որով սահմանվում էր, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված էլեկտրոնային եղանակով և հարկային մարմնից ձեռք բերված ձևերով հարկային հաշիվները կարող են դուրս գրվել օրենքով նախատեսված համապատասխան իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո:

րության 2010 թվականի մայիսի 13-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը կիրառելու մասին N 552-Ն որոշումը, որով սահմանվում էր, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված էլեկտրոնային եղանակով և հարկային մարմնից ձեռք բերված ձևերով հարկային հաշիվները կարող են դուրս գրվել օրենքով նախատեսված համապատասխան իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի շեմի կիրառման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	21 մայիսի 2010թ, N 358-Ն, 11 մայիսի 2010թ, N6
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N 15(367), 01.07.2010թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «զ» ենթակետի համաձայն ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում այն առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ, որի կողմից նախորդ օրացուցային տարում ապրանքների մատակարարումից կամ ծառայությունների մատուցումից (բացառությամբ գույքի վարձակալության, անհատույց օգտագործման, ոչ նյութական ակտիվների օտարման և տոկոսների ստացման) հաշվարկված եկամուտների առնվազն 80 տոկոսը վերաբերում է մեկ հարկ վճարողից ստացման ենթակա

եկամուտներին, և (կամ) որի կողմից նախորդ օրացուցային տարում առևտրային գործունեության (վաճառքի) նպատակով ձեռք բերվող ապրանքների ձեռքբերման (բացառությամբ ներմուծման) համար կատարման ենթակա ծախսերի առնվազն 80 տոկոսը վերաբերում է մեկ հարկ վճարողի: Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «զ» ենթակետի դրույթների և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2009թ. մարտի 2-ի N 2 պաշտոնական պարզաբանման 1.6-րդ կետի կիրառման առումով՝

1. ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման դիմաց պե-

տական բյուջեից վճարվող գումարները (եկամուտները) չեն դիտվում որպես մեկ հարկ վճարողից ստացման ենթակա գումարներ,

2. որպես առևտրային գործունեության (վաճառքի) նպատակով ձեռք բերվող ապրանք է դիտվում ավտոմեքենաների գազալցման (գազալիցքավորման) կայանների կողմից ձեռք բերվող գազը:

Հրամանով հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմում քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ և այդ պաշտոնները զբաղեցնող քաղաքացիա-



կան ծառայողների ատեստացիա անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմում քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգը և քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	04 հունիսի 2010թ, N 1415-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N 15(367), 01.07.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

2. ՀԱՐԱԿԻՑ (ՏՆՏԵՍԱԿԱՆ) ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաթուղթ	«2009 թվականի նոյեմբերի 10-ին Բուդապեշտում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունգարիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը
Ամսաթիվը և համարը	25 հունիսի 2010թ, ՍԴՈ-900
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 31(765), 07.07.2010թ.
Ուժի մեջ է	Հրապարակման պահից

Համառոտ նկարագիր

Սահմանադրական դատարանի որոշմամբ վերոնշյալ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: Համաձայնագրի նպատակը Պայմանավորվող պե-

տությունների միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու հետ կապված հարաբերությունների կարգավորումն է: Համաձայնագրով սահմանվում են Հայաստա-

նի Հանրապետությունում և Հունգարիայի Հանրապետությունում գանձվող հարկերի տեսակները, կանոնակարգվում են եկամուտների ստացման երկրում հիմնական եկամտատեսակների՝ շահաբաժինների, տոկոսների, ռոյալթիների հարկման պայմանները և **դրույքաչափերը**: Համաձայնագրով սահմանվում են հարկման հետևյալ օբյեկտները.

- անշարժ գույքից ստացված եկամուտը,
- ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող շահույթը,

- միջազգային փոխադրումներից՝ նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը,

- շահաբաժինները, տոկոսները, ռոյալթին,
- գույքի արժեքի հավելածը,
- արտիստների և մարզիկների գործունեությունից ստացված եկամուտը,
- կենսաթոշակները, պետական ծառայության դիմաց վճարված աշխատավարձը,
- ուսանողին, դասախոսին, ուսուցչին տրված վճարումները, այլ եկամուտներ:



3. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

3.1 | Ծրագրեր և կատարողական

3.1.1 | Ծրագրեր և կատարողական /հարկային ծառայության մասով/

1. | Հարկային տեսչությունների աշխատանքների արդյունքների գնահատում
 ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 30.06.10թ. հաստատվել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ **հարկային (տարածքային) տեսչությունների աշխատանքների արդյունքների գնահատման կարգի փորձնական կիրառման մասին**» N 1503-Ա հրամանը: Հրամանով հաստատված կարգի համաձայն՝ գնահատումն իրականացվում է հարկային տեսչությունների աշխատանքների արդյունքները բնութագրող չափանիշների, ցուցանիշների հիման վրա: Հարկային տեսչությունների աշխատանքների գնա-

հատման համար սահմանվել են հետևյալ **չափանիշները**.

- հավաքագրելիություն (գանձելիություն)
- ստուգման արդյունավետություն
- գերավճարի կառավարման արդյունավետություն
- սպասարկման որակ

Հարկային տեսչությունների աշխատանքների գնահատման համար սահմանված յուրաքանչյուր չափանիշում օգտագործվում են մի շարք **ցուցանիշներ**: Հարկային տեսչությունների աշխատանքների արդյունքները

գնահատվում են ըստ առանձին չափանիշների և ընդհանուր՝ բոլոր 4 չափանիշները միասին:

Վերոնշյալ հրամանի համաձայն՝ հարկային տեսչությունների աշխատանքների փորձնական գնահատումը, վերլուծությունը իրականացվում է յուրաքանչյուր եռամսյակ (մինչև հաջորդ երրորդ ամսվա 15-ը), իսկ հաշվետու տարվա արդյունքներն ամփոփվում են մինչև հաջորդ տարվա մայիսի 15-ը: Նախատեսվում է մինչև 2011թ. հունիսի 15-ը մշակել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչությունների աշխատանքների արդյունքների գնահատման կարգ:

Հարկային ներկայացուցիչների

ինստիտուտի ներդրում

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 07.07.10թ. հաստատվել է «Հարկային մարմնի ներկայացուցիչների աշխատանքների համակարգման և հարկային մարմնի ներկայացուցիչների նշանակման աշխատանքների կազմակերպման մասին» N 1513-Ա հրամանը: Հրամանի համաձայն՝ նախատեսվում է մշակել հարկային մարմնի ներկայացուցիչ նշանակելու ենթակա հարկ վճարողների 2010թ. ցանկում ներառված յուրաքանչյուր հարկ վճարողի մոտ նշանակվող ներկայացուցիչների ցանկերը, ներկայացուցիչների նշանակման ժամանակացույցն ըստ հարկ վճարողների՝ յուրաքանչյուր հարկ վճարողի մոտ հարկային հսկողության իրականացման առաջարկվող ժամկետներով:

2. Փոքր բիզնեսի ներկայացուցիչների համար պարզեցված հաշվառման և հարկերի հաշվարկման ձեռնարկի մշակում

3.1.2 | Ծրագրեր և կատարողական /մաքսային ծառայության մատույն/

Սույն թվականի հունիսի 28-30-ը ապահովվել է մասնակցություն «Սահմանների համալիր կառավարման ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակում» թեմայով ազգային սեմինարին, որը տեղի է ունեցել Ծաղկաձորում: Սեմինարը կազմակերպվել էր Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարման (ՀԿ ԱՀԿ) ծրագրի կողմից՝ ազգային ռազմավարության մշակ-



Հարկային մարմնի կողմից մշակվել և 29.06.10թ. հրապարակվել է (հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի «Հրապարակումներ» բաժնում) «Փոքր բիզնեսի ներկայացուցիչների համար պարզեցված հաշվառման և հարկերի հաշվարկման» ձեռնարկը: Ձեռնարկն անդրադարձել է փոքր և միջին ձեռնարկատիրության համար բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով ներդրված կազմակերպությունների համար շահութահարկի, անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի պարզեցված հաշվարկման մեխանիզմների կիրառման հարցերին:

Ձեռնարկում ներկայացված են կազմակերպությունների կողմից շահութահարկի հաշվարկման, անհատ ձեռնարկատերերի կողմից եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման, կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային գործակալի պարտավորությունների կատարման, ինչպես նաև ՀԴՄ-ի կիրառման կանոնները:

Սեմինարը բաղկացած էր գեկույցներից և աշխատանքային քննարկումներից, որոնք վարում էին համապատասխան միջազգային և տեղական փորձագետներ, և ներառում էր այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ սահմանների համալիր կառավարման հայեցակարգը, ՍՀԿ հիմնարար սկզբունքները, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի դերը ազգային անվտանգության ռազմավարության, այդ թվում՝ սահմանների անվտանգության ռազմավարության իրականացման գործում, ՍՀԿ ռազմավարության շրջանակներն ու բովանդակությունը, ներգերատեսչական, միջգերատեսչական և միջազգային համագործակցության սկզբունքները ՍՀԿ համատեքստում և այլն:

Սույն թվականի հուլիսի 19-20-ը ապահովվել է մասնակցություն «ԵՄ-ում համապատասխանության գնահատում և տեխնիկական ներդաշնակեցում» թեմայով Երևանում տեղի ունեցած աշխատաժողովին: Աշխատաժողովի նպատակն էր՝ մանրամասնորեն ներկայացնել տեխնիկական ներդաշնակեցման և համապատասխանության գնահատման ընթացակարգերին առնչվող ԵՄ իրավական դաշտը, ինչպես նաև Հայաստանում զարգացնել վարչական կարողությունները, նախապատրաստել և վարել բանակցություններ Եվրամիության հետ նախատեսվող էությունը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ:

3.2 | Գանգատարկումների և ծառայողական քննությունների ակնարկ

3.2.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /հարկային ծառայության մասով/

20.06.2010թ.-ից մինչև 20.07.2010թ.-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից լսվել են 4 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում 4 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 20.06.2010թ.-ից մինչև 20.07.2010թ.-ը ընկած ժամանակահատվածում լսվել է ընդամենը 16 բողոք, որից.

- բավարարվել է 4 բողոք,
- մերժվել է 12 բողոք:

3.3 | Միջազգային համագործակցություն

Հարկային մարմինների ներ-եվրոպական կազմակերպության /Intra-European Organisation of Tax Administrations-IOTA/ հերթական՝ 14-րդ համագումարի օրակարգում ընդգրկված էր ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ներկայացված անդամակցության հայտը: Կազմակերպության հերթական նիստը տեղի է ունեցել ս/թ հուլիսի 8-9-ը, որին մասնակցում էին կազմակերպության 42 անդամ հարկային մարմինների ներկայացուցիչներ: Անդամների կողմից հավանության է արժանացել ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ներկայացված լիիրավ անդամակցության հայտը, որը ուժի մեջ կմտնի 2011թ. հունվարի 1-ից: IOTA-ն հարկային վարչարարության հարցերում միջազգային համագործակցության



ուրորտում գործող հեղինակավոր կազմակերպություններից է, որն ընդգրկում է եվրոպական տարածաշրջանի 44 պետությունների հարկային մարմիններ, այդ թվում՝ Արևմտյան և Արևելյան Եվրոպայի պետությունների բացարձակ մեծամասնությունը, ԱՊՀ եվրոպական մասի բոլոր երկրները: Հիմնադրման 14 տարվա ընթացքում IOTA-ն նպաստում է տարածաշրջանի հարկային

մարմինների միջև համագործակցությանը և աջակցում դրանց զարգացմանը՝ յուրաքանչյուրի կարիքներին համապատասխան, բացահայտում լավագույն հարկային փորձն ու խրախուսում դրա ներդրումն անդամակցող պետություններում, անդամներին ապահովում խորհրդատվությամբ՝ հարկային վարչարարության հարցերում:

3.4 | Հարկային և մաքսային թվերի համառոտագիր

3.4.1 | Հարկային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2010 թվական		
		հունիս	Հունվար - հունիս	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-հունիս)%
2	3	4	5	
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ	1164	7705	91.4
2	Հարկային մարմնի կողմից պետություն չհավաքագրված եկամուտներ (մլն դրամ), այդ թվում՝	38,380	214,289	117.3
2.1	ԱԱՀ	10,741	49,465	148.8
2.2	Շահութահարկ	5,534	43,461	96.8
2.3	Ակցիզային հարկ	581	3,062	109.6
2.4	Եկամտահարկ	6,208	34,484	128.7
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	9,476	54,691	114.3
2.6	Այլ	5,841	29,125	107.4
3	Հարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	3157	12990	98.5
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն դրամ)	2,961	10,176	64.7

3.4.2 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2009թ.		2010թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		հունվար-հունիս	հունիս	հունվար-հունիս	հունիս	հունվար-հունիս	հունիս
2	3	4	5	6	7	8	
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	97,562	18,505	124,893	22,402	128.0	121.1
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	604,122	133,468	843,999	144,562	139.7	108.3
2.1	Արտահանում (մլն դրամ)	112,798	26,561	171,361	29,442	151.9	110.8
2.2	Ներմուծում (մլն դրամ)	491,324	106,907	672,639	115,120	136.9	107.7
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	12,807	3,054	13,693	3,766	106,9	123